ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

Դատական դեպարտամենտի կարիքների համար ավտոմեքենաների անիվների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-26/05» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«16» ապրիլի 2026թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արթուր Ասատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի անդամներ՝

Նորայր Աղամալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Անդրանիկ Աբգարյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի քարտուղար՝

Արուս Խաչատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ

Նիստից բացակայում էր՝

Վարդան Կարապետյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ – շինարար

1. **Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտում հրավերով պահանջվող փաստաթղթի առկայության, ինչպես նաև eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերի մուտքագրման (լրացման) մասին.**

ՏԻԳՐԱՆ ԿԱՐԱԽԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄԻ Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտում առկա է հրավերով պահանջվող էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1): Համակարգում մուտքագրված (լրացված) չեն 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտի (հայտում առկա փաստաթղթի)՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

ՏԻԳՐԱՆ ԿԱՐԱԽԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄԻ Ա/Ձ

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես դիմում-հայտարարությունը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Ընդ որում, եթե մասնակցի կողմից ներկայացված հայտում ներառված փաստաթուղթը հաստատվում է լիազորված անձի էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ (լիազորագիր):

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

- նիստը կասեցնել և հաջորդ նիստը հրավիրել 2026թ. ապրիլի 18-ին, ժամը 10:00-ին, Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնի վարչական շենքում (հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1):

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի քարտուղարին.

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի, ինչպես նաև «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-26/05» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 8.11-րդ կետի պահանջներով՝ **ՏԻԳՐԱՆ ԿԱՐԱԽԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄԻ Ա/Ձ-ի** հայտում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների մասին էլեկտրոնային եղանակով՝ Համակարգի միջոցով ծանուցել հիշյալ մասնակցին՝ առաջարկելով մինչև սույն թվականի **ապրիլի 17-ը ներառյալ** Համակարգի միջոցով շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ _____ Արթուր Ասատրյան

Անդամներ՝ _____ Նորայր Աղամալյան

_____ Տիգրան Զեյնալյան

_____ Անդրանիկ Աբգարյան

Քարտուղար՝

_____ Արուս Խաչատրյան